մէջ լեռներով շրջապատուած (պատկ. 134 և 32)՝ հիւսիս-արևելեան կողմը (պատկ. 135) ահաւոր և բարձրաբերձ ժայռերով, իսկ հարաւ-արևմտեանը թփերով և ալպեան կանաչով։

Սակայն ԺԲ. դարի կէսերից առաջ եղած ոչ մի իրական մնացորդ չէ հասել մեր ձեռքը, և ոչ էլ ունինք որ և է տեղեկութիւն վանքի անընդհատ կենդանութեան մասին մինչև այդ ժամանակը. հնագոյն մնացորդը բուն վանքի պարսպից դուրս դէպի արևմուտք գտնուած Աստուածածնի այրն է (պատկ. 136) հարաւ-արևմտեան ճակատին, ժայռի վերայ փորագրուած մի քանի խաչերով, դոցանից երրորդը ձախից դէպի աջ ունի հետևեալ արձանագրութիւնը.

ՈԺԴ (= 1164) թվակ | հաց կանկնեցաւ սբ. . . . (նշա)նս ի բարեխաւսութիւն . . . (մնացածը չի կարդացւում)։

Արձանագրութիւն է ունեցել եւ երկրորդ խաչը, բայց խստաւ փչացած է։

Այրի սրբատաշ պատի վերայ, որտեղից և մուտքն է, կան մի շարք արձանագրութիւններ այլ և այլ ժամանակներից, որոնցից մի քանիսը թուականով. այդ արձանագրութիւնները երեք խմբի կարելի է բաժանել. առաջինը հիւսիսային անկիւնում, երկրորդը մէջ տեղը և երրորդը սորա տակը նոր սկզբնաւորութեամբ. իւրաքանչիւր խումբն էլ ունի մի մի թուականով արձանագրութիւն, որով և միւսների ծագման մօտաւոր ժամանակը կարելի է որոշել։ Կարծում ենք, որ այդ արձանագրութիւնները ծագումով թէեւ աւելի հին, փորագրուած են ԺԳ. դարի կէսերին, երբ նորոգուեցաւ Աստուածածնի անուան այս այրը։ Դոցանից հնագոյնը մէջ տեղինն է, որի առաջին արձանագրութիւնը կրում է 1177 թիւը.

1. Ի թվ. ՈՒԶ։ Ես Ստեփաննոս Կուտակեա(ն)ց եռու զիմ հայրե(նի)
2. զԲարափաւղոց եռու (s!) ի սբ. ուխտս յառաջնորդ
3. ութե. հաւր Գրիգորոյ :Դ: աւր ժամ ի տարոյն
4. Ստեփանոսի որ եւ խառնեցաւ Մարեմարոյն մեծաւ աշխատութիւ. :Ը:

Պատկեր 134.